ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆՎԻՐՅԱԼԸ
(Լավրենտի Բարսեղյանի ծննդյան 80-ամյակի առթիվ)

Պատմական գիտությունների դոկտոր Լավրենտի Աշոտի Բարսեղյանը ծնվել է 1937 թ. հունվարի 7-ին Երևանում: 1954 թ. արծաթե մեդալով ավարտել է Քաջարանի միջնակարգ դպրոցը, ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը և այն գերազանցությամբ ավարտել 1959 թ.: Դեռևս ուսանողական տարիներին երևակվեցին Լ. Բարսեղյանի գիտական և կազմակերպչական ընդունակությունները, երբ ղեկավարեց ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության խորհուրդն ու ընտրվեց շրջանային խորհրդի պատգամավոր:

Համալսարանն ավարտելու տարին քսաներկուամյա Լ. Բարսեղյանն ընտրվեց կոմերիտմիության Սպանդարյանի շրջկոմի առաջին քարտուղար: Սակայն սերը դեպի հնագիտություն երկու տարի հետո նրան տարավ դեպի ՀԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, որտեղ էլ պատրաստեց ու 1964 թ. պաշտպանեց իր թեկնածուական թեզը՝ “Հայկական լեռնաշխարհի ցեղային միությունների պատմությունից մ. թ. ա. 15–13-րդ դդ.” թեմայով: Նույն թվականին Լ. Բարսեղյանն ընտրվեց Երևանի քաղխորհրդի պատգամավոր՝ ստանձնելով քաղխորհրդի գործկոմի քարտուղարի պաշտոնը:

Հաշվի առնելով երիտասարդ գիտնականի կազմակերպչական ունակությունները՝ 1967 թ. Լ. Բարսեղյանին նշանակում են ՀԽՍՀ շինարարության պետական կոմիտեի հուշարձանների պահպանության և վերականգնման վարչության պետի տեղակալ: Մոտենում էր քաղաքամայր Երևանի 2750-ամյա հոբելյանը և երկրի ղեկավարները քաջ գիտակցում էին, որ Լ. Բարսեղյանն իր անսպառ էներգիայով ու գիտական պաշարով ամենահարմար թեկնածուն է կառուցվելիք “Էրեբունի” թանգարանի և համանուն ամրոցի վերականգնման աշխատանքները ղեկավարելու համար: Թե որքան անքուն գիշերներ է անցկացրել հատկացված սեղմ ժամկետում հնավայրը և թանգարանային ցուցադրությունը մինչև 1968 թ. հոբելյանական միջոցառումները նախապատրաստելու համար, թե ինչ հնարքների է դիմել շինան-

յութն ու անհրաժեշտ մյուս պարագաները հայթայթելու ուղղությամբ, Լ. Բարսեղյանը հիշում ու պատմում էր տասնամյակներ անց:

1968–1972 թթ. նա ղեկավարում է Դսեղում Հովհ. Թումանյանի տուն-թանգարանի և Գառնիի տաճարի վերականգնման աշխատանքները (ճարտարապետ՝ Ա. Սահինյան): Առաջ ընկնելով նշենք, որ հետագա տասնամյակներում ևս Բարսեղյանի կազմակերչական անուրանալի տաղանդի արգասիքը դարձան համազգային գիտամշակութային արժեք ունեցող Հայաստանի ազգագրության պետական թանգարանը և Հայոց ցեղասպանության ինստիտուտ-թանգարանը:

1973–1978 թթ. Բարսեղյանը գլխավորում է ՀԽՍՀ մշակույթի նախարարության կուլտուր-լուսավորական հիմնարկների վարչությունը: 1978 թ. նախատեսվում էր ավարտին հասցնել Սարդարապատի ճակատամարտի հուշահամալիրի և ազգագրության թանգարանի համակառույցի շինարարությունն ու թանգարանային ցուցադրության կազմակերպման աշխատանքները, և Լ. Բարսեղյանը նորից լծվում է մինչ այդ Հայաստանում իր նմանը չունեցող հսկայածավալ նախագծի կյանքի կոչման շնորհակալ գործին: Նա մշակում է Հայաստանի ազգագրության թանգարանի գիտական ցուցադրության հայեցակարգը և իր երիտասարդ կոլեկտիվի հետ ձեռնամուխ լինում թանգարանային ցուցադրության կազմակերպմանը: Հարկ է նշել, որ ազգագրության թանգարանի՝ Բարսեղյանի կազմած գիտական ցուցադրության հիմնական սկզբունքները պահպանվել են մինչ օրս: Հայաստանի ազգագրության պետական թանգարանի գիտական ցուցադրության ստեղծման համար 1981 թ. Լ. Բարսեղյանն արժանանում է ԽՍՀՄ մինիստրների խորհրդի մրցանակի: 1984–1985 թթ. նա համատեղության կարգով ղեկավարում է նաև Հայաստանի հեղափոխության պետական թանգարանը:

1985 թ., երբ կրակի ճարակ դարձավ Երևանի մարզահամերգային համալիրը, երկրի ղեկավարությունը գտավ, որ միայն նա կարող է կարճ ժամանակահատվածում կազմակերպել կառույցի վերաշինման և վերակահավորման աշխատանքներն, ու ինչպես միշտ Բարսեղյանը փայլուն կատարեց իրեն վստահված գործը: Հաջորդ տարի Լ. Բարսեղյանը նշանակվում է “Հայգլխհամերգ”-ի տնօրեն: Նրա գործունեության հաջորդ հանգրվանը ՀԽՍՀ մինիստրների խորհրդին առընթեր պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչության պետի բարձր պաշտոնն էր (1988–1991 թթ.): Այս կարճ ժամանակահատվածում Լ. Բարսեղյանն իրականացնում է մի շարք արմատական կառուցվածքային փոփոխություններ պատմամշակութային հուշարձանների պահպանության, օգտագործման, վերականգնման ոլորտում և կյանքի է կոչում արգելոց-

թանգարանների ստեղծման իր գաղափարը, որի հիմնավորումը նրա կողմից առաջ էր քաշվել դեռևս 1970-ական թվականներին: Պատմամշակութային ժառանգության պահպանման և հանրայնացման լավագույն օրինակ էին դարձել Լ. Բարսեղյանի կողմից մշակված և գիտական հիմնավորում ստացած "Կումայրի" արգելոցի, Գյումրու "Քաղաքային կենցաղի և ժողովրդական ճարտարապետության թանգարան"-ի ու Ս. Մերկուրովի տուն-թանգարանի ստեղծումը 1984 թ.: Վերոհիշյալ մշակութային արժեքների ստեղծման համար Լ. Բարսեղյանը 1985 թ. արժանացավ ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկրի կոչման ու պարգևատրվեց ԽՍՀՄ "Պատվո նշան" շքանշանով: Ստանձնելով ՀԽՍՀ մինիստրների խորհրդին առընթեր պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչության պետի պաշտոնը՝ Լ. Բարսեղյանն անմիջապես ձեռնամուխ եղավ պատմամշակութային արգելոցների խիտ ցանցի ստեղծման իր վաղեմի ծրագրին ու կառավարության հաստատմանը ներկայացրեց վարչության կազմում գործող թանգարանների բազայի վրա կազմակերպել "Պատմական միջավայրի պահպանության և պատմամշակութային արգելոց-թանգարանների միացյալ դիրեկցիա" (վերջինիս իրավահաջորդն այսօր գործող ՀՀ մշակույթի նախարարության "Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն" ՊՈԱԿ-ն է) ստեղծելու նախագիծը, որը հաստատվեց 1988 թ. հուլիսի 14-ի որոշմամբ: Դիրեկցիայի կազմում ընդգրկվեցին Երևանի հիմնադրման պատմության "Էրեբունի" թանգարանը՝ "Կարմիր բլուր" և "Շենգավիթ" մասնաճյուղերով, "Կումայրի" պատմամշակութային արգելոց-թանգարանը, "Զվարթնոց", "Հաղարծին", "Գոշավանք", "Գլաձոր" պատմաճարտարապետական, "Գառնի", "Մեծամոր" պատմահնագիտական, "Տաթև", "Արենի" պատմամշակութային, "Դիլիջանի ժողովրդական ճարտարապետության" արգելոց-թանգարանները և այլն: Լ. Բարսեղյանի ջանքերով Հայաստանում առաջին անգամ ստեղծվեց նաև նոր տիպի բնապատմական արգելոց, որը ներառում էր Եղեգնաձորի շրջանի Արփի գյուղի տարածքում գտնվող կարստային ծագում ունեցող երեք քարանձավ (ներկայիս "Արփի բնապատմական արգելոցը"): 1990 թ. Լ. Բարսեղյանը կառավարության հաստատմանն է ներկայացնում պատմամշակութային արգելոց-թանգարանի տիպային կանոնադրությունը, որը հայկական (և ոչ միայն) իրականության մեջ առաջինն էր իր ընդգրկմամբ ու գիտամեթոդական կուռ կառուցվածքով: Արգելոց-թանգարան հասկացության՝ Լ. Բարսեղյանի սահմանումը համարվում է ցայժմ հրապարակում եղածների մեջ լավագույնը: Ահավասիկ մեջբերենք նշված սահմանումը բառացի. "Արգելոց-թանգարանը կազմակերպվում է պատմության և

մշակույթի անշարժ հուշարձանների համալիրների և պատմականորեն, էթնիկական, լանդշաֆտային, գեղագիտական տեսակետներից միմյանց փոխկապակցված տարածքների բազայի վրա, որոնք իրենցից ներկայացնում են պատմական, գիտական, ճարտարապետական, գեղարվեստական և մշակութային արժեք: Արգելոց-թանգարանի կազմում կարող են նաև մտնել պատմության և մշակույթի հուշարձանների հետ համակցված բնության եզակի համալիրները"[1]: Լ. Բարսեղյանի հեղինակած ծրագրից երկու տարի հետո միայն ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության կոմիտեի 1992 թ. 16-րդ նստաշրջանում ձևակերպվեց "մշակութային լանդշաֆտ" հասկացությունը որպես առանձին կատեգորիա:

1992 թ. Լ. Բարսեղյանը նշանակվեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ֆ. Սարգսյանի տեղակալ ընդհանուր հարցերի գծով՝ պաշտոնավարելով մինչև 1995 թ.:

Մեծ եղեռնի 90-րդ տարելիցին ընդառաջ կառուցվում էր Ցեղասպանության թանգարանը, որի շինաշխատանքները ժամանակին ավարտին հասնելու, ներքին հարդարանքը, կահավորումը պատշաճ տեսքի բերելու և գիտական ցուցադրության հայեցակարգը ստեղծելու համար Հայաստանի այն ժամանակվա ղեկավարությունն ավելի հարմար թեկնածու չգտավ, քան Լ. - Բարսեղյանը: Իրեն հատուկ անսպառ եռանդով նա լծվեց գործի և ստեղծեց, հիրավի, լուրջ ակադեմիական հիմնարկ, որը, նրա իսկ պահանջով, ներգրավվեց ԳԱԱ համակարգում՝ որպես թանգարան-ինստիտուտ՝ համալրելով գործող հայագիտական գիտահետազոտական հաստատությունների շարքը: Լ. Բարսեղյանի օրոք թանգարան-ինստիտուտը վերածվեց ցեղասպանագիտության լուրջ ակադեմիական կենտրոնի և նրա անմիջական մասնակցությամբ ձեռնարկվեց Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման ուղղությամբ տարբեր երկրների խորհրդարանների և միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպված քննարկումների նյութերի հրատարակման գործը: Հայերեն լեզվով լույս տեսան Հունաստանի, Կանադայի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Ավստրալիայի, Իտալիայի խորհրդարանների, Ժողովուրդների մշտական դատարանի և Եվրոխորհրդարանի որոշումներն ու նիստերի արձանագրությունները: Լ. Բարսեղյանի ջանքերով Ցեղասպանության ինստիտուտ-թանգարանը լույս ընծայեց ժա-

---

[1] *Դ. Պողոսյան. Արգելոց-թանգարանների ցանցի ձևավորումը Հայաստանում 1980–1990-ական թթ., Հայոց պատմության ու մշակույթի նվիրյալը.– Հանրապետական գիտական նստաշրջանի նյութերի ընտրանի, նվիրված անվանի պատմաբան, թանգարանագետ Լավրենտի Աշոտի Բարսեղյանի ծննդյան 80-ամյակին, Երևան, 2018, էջ 39:*

մանակի հայ անվանի պատմաբանների, ցեղասպանագետների, մշակութաբանների և այլոց աշխատությունները՝ նվիրված Հայոց Մեծ եղեռնին: Մինչ թանգարան-ինստիտուտի պաշտոնավարման ավարտը՝ 2006 թ., Լ. Բարսեղյանը միջազգային տարբեր գիտական համաժողովներում և գիտական նստաշրջաններում (Ստրասբուրգ, Հռոմ, Փարիզ, Բուենոս-Այրես, Մայնի Ֆրանկֆուրտ) հանդես է գալիս զեկուցումներով, որոնցում արծարծվում էին ոչ միայն Հայոց Մեծ եղեռնի, այլև ընդհանուր ցեղասպանագիտական հիմնախնդիրները:

1998 թ. Լ. Բարսեղյանը "Հայ ժողովրդի ծագման և կազմավորման հարցերը պատմագիտության մեջ" թեմայով պաշտպանում է դոկտորական թեզ՝ ստանալով պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

2005–2007 թթ., համատեղության կարգով, Լ. Բարսեղյանը կրկին ղեկավարում է Սարդարապատի հուշահամալիրը և Հայաստանի ազգագրության պետական թանգարանը: 2007 թ. դասախոսական աշխատանքի է անցնում Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի կուլտուրայի ֆակուլտետում՝ հետագայում վարելով Թանգարանագիտության ամբիոնի վարիչի պաշտոնը: Բարսեղյան տեսաբանի և պրակտիկ թանգարանագետի հսկայական գիտելիքներն ու փորձը չափազանց անհրաժեշտ էր մանկավարժական բուհի համար այս նոր մասնագիտության կայացման և արհեստավարժ թանգարանային աշխատողների պատրաստման համար: Մինչև իր մահկանացուն կնքելը՝ 2014 թ., Լ. Բարսեղյանը ղեկավարեց հիշյալ ամբիոնը՝ իր շուրջ հավաքելով փորձառու թանգարանագետերի և երիտասարդ կադրերի, որոնց շնորհիվ այսօր ունենք թանգարանագիտական նոր դպրոց:

Դեռևս ուսանողական տարիներին Լ. Բարսեղյանի գիտական մեծ ներուժը չէր վրիպել ժամանակի շատ ականավոր հայագետների սուր աչքից: Մեծանուն հայագետ Կ. Ղաֆադարյանի փայլուն դասախոսություններից ոգևորված՝ Լ. Բարսեղյանն ու իր համակուրսեցիներն ընտրեցին հնագիտություն մասնագիտացումը՝ հետագայում դառնալով այս գիտաճյուղի աչքի ընկնող ներկայացուցիչներ՝ Արամ Քալանթարյան, Մեղա Դևեջյան, Ժորես Խաչատրյան, Ֆրինա Բաբայան, Աղավնի Ժամկոչյան:

Արդեն 1959 թ. քսաներկուամյա Լ. Բարսեղյանը նորաստեղծ "Պատմաբանասիրական հանդեսի" 2-րդ համարում լույս ընծայեց "Պալեոլիթյան կայան Հայաստանի հյուսիսում" գիտական հաղորդումը, որը խոստումնալից գիտական ապագայի դռներ էր բացում երիտասարդ հնագետի առջև: Ի տարբերություն իր համակուրսեցիների՝ Լ. Բարսեղյանը նախընտրեց հայոց պատմության հնագույն շրջանի, հինարևելյան պետությունների հետ կապ-

ված՝ հայոց նախապատմության ուսումնասիրությունը: Հայ հնագիտության սյուներից մեկը՝ պրոֆեսոր Հարություն Մարտիրոսյանը, մեծ ցանկություն և հույսեր ուներ, որ երիտասարդ հնագետը կզբաղվի խեթագիտությամբ:

1961 թ. Բարսեղյանի ղեկավարած հնագիտական արշավախումբը պեղումներ է իրականացնում Նոյեմբերյանում հայտնաբերված Ք. ա. X–XI դդ թվագրվող դամբարանադաշտում: Հաջորդ տարի Գեղամա լեռներում կատարած հետախուզական հետազոտության արդյունքում նա հայտնաբերեց վեց "վիշապաքար" (կամ վիշապ-կոթողներ), որոնց մասին գիտական հաղորդումը հրապարակվեց "Պատմա-բանասիրական հանդեսի" 1967 թ. - 4-ում: 1963 թ., գլխավորելով Մեծամորի հնագիտական արշավախումբը, Լ. Բարսեղյանը սկիզբ դրեց հնավայրի երկարամյա պեղումներին: Նրա 1960-ական թվականների գիտական գործունեության արդյունքը Ք. ա. XV դ. կազմակերպված Հայասա-Ազզի ցեղային միության սոցիալ-տնտեսական հարաբերությունների և քաղաքական պատմության ամբողջացումն էր՝ հնագիտական ու աղբյուրագիտական տվյալների համադրմամբ: Լ. Բարսեղյանն առաջիններից մեկն էր հայագիտության մեջ, ով փորձեց հիմնավորել Ք. ա. XX դ. հիշատակվող Արմանի երկիրը Հայկական լեռնաշխարհում տեղադրելու վարկածը՝ "Պատմա-բանասիրական հանդեսի" 1964 թ. - 2-ում հրապարակելով "Դիտողություններ Արմանի, Արմե, Ուրմե երկրների մասին" հոդվածը:

Երիտասարդ գիտնականի հետաքրքրությունների շրջանակը չէր սահմանափակվում միայն Հայկական լեռնաշխարհի տարածքում կազմակերպված հնագույն ցեղային միությունների ուսումնասիրությամբ: Նա կարողացավ հավաքել և հրատարակել ուրարտական 190 նշանագիր (հիերոգլիֆ): Ուրարտական գրավոր հուշարձաններում հանդիպող այս նշանագրերը շուրջ 100 տարի առաջ հայտնի էին դարձել գերմանացի գիտնական Լեհման-Հաուպտի Տոսպ-Վան մայրաքաղաքում կատարած պեղումներից, ինչպես նաև հետագայում բացված ուրարտական այլ հուշարձաններից, որոնց վերլուծությանն էր նվիրված ԳԱ "Լրաբեր հասարակական գիտությունների" ամսագրի 1967 թ. - 2-ում ռուսերեն լեզվով հրապարակված հոդվածը:

Ավելի ուշ Լ. Բարսեղյանը ձեռնամուխ եղավ հայ ժողովրդի ծագման և կազմավորման հարցերին նվիրված պատմագիտական ժառանգության ամբողջացման գործին՝ հավաքելով հայ ժողովրդի ծագման և կազմավորման մութ ու խրթին հարցերին առնչվող համարյա բոլոր սկզբնաղբյուրները՝ սկսած խեթական, հինարևելյան աղբյուրներից, հունական, արաբական պատմիչների, աշխարհագրագետների երկերից, հայկական մատենագրությունից, մարդաբանական տվյալներից, մինչև հայ և օտար պատմագրության

մեջ ու ժամանակակից անվանի հայագետների ուսումնասիրությունների արդյունքները: Պատմագրական այս եզակի հետազոտության ժամանակագրական ընդգրկումը հիրավի հսկայական էր, դրա միայն պատմագիտական բաղադրիչը ներառում էր V դարից մինչև XX դարի 70-ական թվականներն ընկած ժամանակահատվածը:

1996 թ. լույս տեսավ Լ. Բարսեղյանի "Հայ ժողովրդի ծագման և կազմավորման պրոբլեմները պատմագիտության մեջ" աշխատությունը, որն իր տեսակի մեջ եզակի է հայագիտության մեջ: Նրա պրպտումների շնորհիվ առաջին անգամ հայ պատմագրության մեջ ի մի բերվեցին պատմագիտական, հնագիտական, հնէամարդաբանական ու մատենագիտական ուսումնասիրությունների արդյունքները, որոնց գիտական բարձր մակարդակը ըստ արժանավույն գնահատվեց շատ հայագետների կողմից: ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գագիկ Սարգսյանը, բարձր գնահատելով Լ. Բարսեղյանի գիտական աշխատանքը, շեշտել է հեղինակի օբյեկտիվությունը, բարեխղճությունը, անաչառությունը՝ համարելով այն կարևոր ներդրում հայ պատմագրության պատմության մեջ[2]:

Լ. Բարսեղյան գիտնականը, պետական և մշակութային գործիչն անջնջելի հետք է թողել բոլոր այն բնագավառներում, որոնց առնչվել է իր երկարատև աշխատանքային գործունեության ընթացքում: Անսահման աշխատասիրությունը, գործին անմնացորդ նվիրվելը, խստապահանջությունը, բծախնդրությունը, ցանկացած թերացման հանդեպ անհանդուրժողականությունը Լ. Բարսեղյան անհատի այցեքարտն էին:

ԿԱՐԻՆԵ ԲԱԶԵՅԱՆ,
ԳՐԻԳՈՐ ԱՂԱՆՅԱՆ

---

[2] *Ս. Դ ե վ ե ջ յ ա ն, Ֆ. Բ ա բ ա յ ա ն. Գիտնականը, թանգարանագետը, ընկերը, Հայոց պատմության ու մշակույթի նվիրյալը.– Հանրապետական գիտական նստաշրջանի նյութերի ընտրանի, նվիրված անվանի պատմաբան, թանգարանագետ Լավրենտի Աշոտի Բարսեղյանի ծննդյան 80-ամյակին, էջ 5:*